ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

Տ. ԲԱԳՐԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼՍՏԱՆՅԱՆԸ՝ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ հոկտեմբերի 14-ի Հայրապետական տնօրինությամբ Տ. Բագրատ վարդապետ Գալըստանյանը նշանակվել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ:

Տ. Բագրատ վարդապետ Գալստանյանը (ավազանի անունը՝ Վազգեն) ծնվել է 1971 թ. մայիսի 20-ին Գյումրիում: 1978-1988 թթ. սովորել է Երևանի համար 156 դպրոցում:

1988 թ. ընդունվել է Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1993 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի:

1994 թ. գերազանց առաջադիմությամբ ավարտել է Հոգևոր Ճեմարանը՝ պաշտպանելով ավարտաճառ «Խոսրով եպիսկոպոս Անձևացի. կենսագրական գծեր. Բացայայտութիւն Կարգաց Եկեղեցւոյ. բնագիրն ու աստվածաբանությունը» թեմայով:

1995 թ. հունիսի 23-ին, ձեռամբ երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: Գևորգյան Հոգևոր Ճեմարանում դասավանդել է եկեղեցական երաժշտություն և Ս. Պատարագի մեկնություն առարկաները: Աշխատակցել է Մայր Աթոռի «Էջմիածին» պաշտոնական ամսագրի խմբագրությանը:

1996 թ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ նշանակվել է «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր, միաժամանակ դասավանդել Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

1998 թ. մեկնել է Անգլիա՝ ուսումը կատարելագործելու Մըրֆիլդի «Ս. Հարություն» աստվածաբանական քոլեջում և Լիդզի համալսարանում:

2000 թ. հուլիսին, ավարտելով ուսումնառությունը, Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ վերադարձել է Մայր Աթոռ և օգոստոսի 1-ից նշանակվել Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսուչ:

2002 թ. փետրվարին պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Հիվանդաց օծման խորհրդի խնդիրը Հայ Եկեղեցում» թեմայով, և ստացել վարդապետական աստիճան:

2002 թ. հոկտեմբերի 14-ից Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ նշանակվել է Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ: